ԿՈՍՏԻԿՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՍԵՖՅԱՆ ՇԱՀԵՐ ՍՈՒԼԵՅՄԱՆԻ, ՍՈՒԼԹԱՆ ՀՈՒՍԵՅՆԻ ԵՎ ԹԱՀՄԱՍՊ II-Ի՝ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԸ

Հայ ժողովրդի ու Իրանի պատմության կարևորագույն սկզբնաղբյուրների թվին են պատկանում պարսից շահերի հրովարտակներն ու հրամանագրերը (ֆերմաններն ու հոքմերը)՝ տրված հայոց վանքերին, ազնվականներին ու համայնքներին զանազան առիթներով:

Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է շահական հրովարտակների ու այլ պարսկական պատմական վավերագրերի մի խոշոր հավաքածու (մոտ 1500): Ամենայն հայոց կաթողիկոսների կողմից ձեռք բերված Էջմիածնի ու ընդհանրապես հայ ժողովրդի զանազան խնդիրներին վերաբերող պարսից շահերի հրովարտակների հակիրճ նկարագրությունները կարելի է գտնել Մ. Երևանցու «Ջամբռում»[1]: Այդ փաստաթղթերի ուսումնասիրման հարցում իր նշանակալի ներդրումն է կատարել հայ ճանաչված արևելագետ Հ. Դ. Փափազյանը, որը բացի արաբատառ մի շարք փաստաթղթերի քննությանը նվիրված իր մի քանի հոդվածներից, ժամանակին ուսումնասիրել ու հրատարակել է շուրջ 66 հրովարտակ և 27 կալվածագիր, որոնցից հնագույնը Սուլթան Ջահանշահի 1449թ. հրովարտակն է, իսկ վերջինը՝ Շահ Աբաս II-ի 1650թ. հրովարտակը[2]:

Չնայած բազմավաստակ գիտնականի կատարած մեծ աշխատանքին, Մատենադարանի արաբատառ վավերագրերի (հատկապես 1650թ. հետո ընկած ժամանակաշրջանի) մեծ մասը մնում է չուսումնասիրված և գիտական լայն շրջանառությունից դուրս: Նշենք նաև, որ նրանց վերաբերող Մատենադարանի ցուցակները (Կաթողիկոսական դիվան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդը) ճշգրիտ չեն և թույլ չեն տալիս վստահաբար հենվել նրանց հակիրճ բնութագրումների վրա: Այս պատճառով կարծում ենք, որ Մատենադարանի արաբատառ ֆոնդերի այս արժեքավոր հավաքածուի ուսումնասիրությունը ու նախ և առաջ նրանց ցուցակների կազմումը հայ արևելագիտության առաջնահերթ խնդիրներից է: Սույն հոդվածի շրջանակներում կներկայացնենք Իրանի Սեֆյան պետության թուլացման ու անկման շրջանի շահեր՝ Սուլեյմանի (Սեֆի II- 1666-

1694թթ.), Սուլթան Հուսեյնի (1694-1722թթ.) և Թահմասպ II-ի (1722-1732թթ.) Մատենադարանում պահվող հրամանագրերի ու հրովարտակների բնագրերի ու պատճենների համառոտ ընդհանրական բնութագրությունը:

Նախ նշենք, որ հրովարտակներից շատերի բնօրինակները չեն պահպանվել, սակայն պահպանվել են նրանց պատճենները (սավադները), որոնք ընդհանուր առմամբ կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են բնօրինակի պատճենները տրված դիվան-ալ-սադարաթի կամ շաբիաթական-նոտարական հաստատությունների կողմից՝ կնքված մահմեդական հոգևորականության այդ բարձրագույն ատյանի և սադրի, շեյխ-ուլ-իսլամի կամ մուֆթիի կնիքներով[3]: Այս սավադները վերցվում էին սովորաբար հրամանների բնօրինակների հետ միաժամանակ կամ ավելի ուշ[4]: Երկրորդ խմբում կարելի է առանձնացնել որևէ կնիքով չկնքված սավադները: Նման փաստաթղթերից օգտվելուց առաջ անհրաժեշտ է ստուգել դրանց հավաստիությունը: Դրանցից շատերի՝, մասնավորապես նաև Կաթողիկոսական դիվանի առաձին 1գ թղթապանակի մի գրքով ներկայացված այդպիսի սավադներից մի քանիսի բնօրինակները ևս կան Մատենադարանում[6], որը թույլ է տալիս հավատալ այդ գրքի նաև մյուս պատճենների իսկությանը: Այս խմբի մյուս սավադների հավաստիության մեջ համոզվելու հարցում օգնում են դրանց շարադրանքի ձևերի քննությունը, դրանց բովանդակության ու պատմական իրականության համեմատությունը, ինչպես նաև որոշ սխալների առկայությունը. երբ տվյալ ոճին բնորոշ բառի փոխարեն գտնում ենք ուրիշը, որը վկայում է սոսկ արտագրողի վերծանության անճշտության մասին:

Սավադների հետ չպետք է խառնել այն հրովարտակները, որոնք վերահաստատում են նախորդ շահերի հրամանագրերը: Իսկ նման հրովարտակները Երևանի Մատենադարանում մեծ թիվ են կազմում:

Նշված շահերի իշխանության տարիներին Սեֆյան պետության քաղաքական թուլացմանը զուգընթաց ուժեղանում էր մահմեդական հոգևորականության դերն ու ազդեցությունը երկրի կյանքում: Այս ժամանակաշրջանում Իրանի հոգևորականության առաջնորդը և նրա կարկառուն դեմքերից մեկը Մուհամմադ Բաղեր Մաջլիսին էր (1627-1699թթ.), որը շահ Սուլեյմանի օրոք շեյխ-ուլ-իսլամն էր, իսկ շահ Սուլթան Հուսեյնի իշխանության տարիներին հասնելով իր փառքի գագաթնակետին՝ ստանում է նոր ու ամենաբարձր հոգևորականի՝ մոլլաբաշիի պաշտոնը[7]: Մատենադարանի մի շարք վավերագրերի վրա գտնում ենք այս հոգևորականի կնիքի դրոշմը և անգամ ստորագրությունը[8]:

Չնայած այն բանին, որ վերոհիշյալ շահերը աչքի չէին ընկնում իրենց կրոնական մոլեռանդությամբ ու անհանդուրժողականությամբ, նրանց իշխանության տարիներին ուժեղանում են հալածանքները այլա-

դավան փոքրամասնությունների, այդ թվում նաև քրիստոնյա հայերի նկատմամբ: Այն աստիճան, որ հայության մի շարք հոգևոր առաջնորդներ ձերբակալվում են, իսկ Նոր Ջուղայի հայ եկեղեցին սկսում է տարեկան որոշ գումար վճարել պետությանը[9]:

Կենտրոնացված պետության անկման հետևանքով նկատվում է նաև տեղական կառավարիչների, պաշտոնյաների կամայականությունների ու չարաշահումների ուժեղացում, ինչպես նաև զանազան օրինախախտ տարրերի ակտիվացում: Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու ջանքերով Իրանի մահմեդական հոգևորականության բարձրագույն ատյանից ձեռք են բերվում հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող կրոնական իրավունքներն ու սովորույթները պաշտպանող հաստատուն ֆեթվաներ և դրանք վավերացվում շահական հրովարտակներով: Այս փաստաթղթերը կոչված էին ապահովելու «ինազանդ զիմմի հպատակներ հանդիսացող» հայ բնակիչների, օրինակ, հայկական օրենքներով ամուսնանալը, հանգուցյալներին թաղելը, եկեղեցու զանգեր խփելը, ժամերգություն կատարելը[10], ինչպես նաև եկեղեցիներ վերանորոգելն ու նորերը կստուցելը[11]: Այդ ֆեթվաները շարիաթական-նոտարական պատճեներով (սավաղներ) բազմացվում և ուղարկվում էին բոլոր թեմերին[12]:

Շահ Սուլեյմանի կողմից զանազան եկեղեցիների վերանորոգման առթիվ տրված մի շարք հրովարտակները, որ կարգադրում են տեղական կառավարիչներին թույլատրել ու օժանդակել հայերին, արտացոլում են այն իրողությունը, որ XVII դարի երկրորդ կեսում շարունակվում է նույն դարի առաջին կեսում սկսված լայնածավալ եկեղեցական շինարարությունը: Այսպես, 1664-1665թթ. շահի հրամանով[13] ու տեղի կառավարիչ Սիրզա Իբրահիմի հանձնարարությամբ վերանորոգվում է Ս. Հովհաննես եկեղեցին[14], 1669թ. սկսում են շինել Խորվիրապի եկեղեցին, Մուղնու Ս. Գևորգի եկեղեցին[15]: 1679-1685թթ. վերանորոգվում է Ս. Թադեոս Առաքյալի եկեղեցին[16], 1698թ. Ս. Գեղարդի վանքը[17] և այլն:

Սեֆյան Իրանին հպատակ հայության սոցիալ-իրավական վիճակի ու հայոց վանքերին վերաբերող հարցերի շուրջ հրապարակված ֆեթվաներն ու հրովարտակները հրապարակվել են հիմնականում XVII դարի 60-ական թվականներին:

Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը այդ ժամանակաշրջանում վճռական պայքար է մղում հատկապես Երևանի բեկլարբեկ Մեֆի Ղուլի խանի ասիմիլյացիոն քաղաքականության, Էջմիածնի հարստահարման և նրա իրավունքների սահմանափակման քաղաքականության դեմ[18]: Մատենադարանի ինչպես այս, այնպես էլ ավելի վաղ ժամանակաշրջանի շահական հրովարտակների մեջ զգալի տեղ են զբաղեցնում Էջմիածնի, Տաթևի և այլ վանքերի վակֆային կալվածքների անձեռնմխելիությունը և նրանց մուաֆությունը (պետական հարկերից ազատված լինելը) պաշտ-

պանող փաստաթղթերը[19]: Այս կարգի փաստաթղթեր ձեռք են բերվում նաև Հակոբ Ջուղայեցուն հաջորդած կաթողիկոսների օրոք[20]: Այսպես, 1684թ. Եղիազար կաթողիկոսի խնդրագրի հիման վրա շահ Սուլիյմանի կողմից տրված հրովարտակը կոչված էր պաշտպանելու Էջմիածնի կալվածքների անձեռնմխելիությունը Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի օրոք արված պարտքերի դիմաց պարտատերերի ոտնձգություններից[21]:

Ըստ հաստատված կարգի հայ կաթողիկոսների ընտրությունը հաստատվում էր շահական հրամանագրով: Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում կարելի է գտնել այս ժամանակաշրջանի Էջմիածնի ու Գանձասարի գրեթե բոլոր կաթողիկոսների իրավունքները հաստատող հրամանագրերը կամ նրանց պատճենները:

Շահ Սուլթան Հուսեյնի իշխանության տարիներին (1694-1722թթ.) Իրանի պետության հետագա անկման հետևանքով կրկնակի, եռակի չափով ծանրանում են հարկերը: Բացի այդ պետական վերահսկողության բացակայության պայմաններում հաճախանում են տեղական կառավարիչների ու մյուս պաշտոնյաների անօրինականություններն ու չարաշահումները: Այս պատճառով նրա օրոք հայ եկեղեցու կողմից ձեռք բերված հրամանագրերի մեջ հատուկ տեղ են գրավում իշխանության տեղական ներկայացուցիչների ապօրինի արարքների դեմ ուղղված հրովարտակները[22]:

Երևանի Մատենադարանի Մելիք-Շահնազարյանների ֆոնդում պահվում են վերոհիշյալ շահերի իշխանության ժամանակաշրջանի որոշ փաստաթղթեր, այդ թվում նաև Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների տոհմի ներկայացուցիչների մելիքական ու կալվածատիրական իրավունքները հաստատող հրամանագրեր[23]:

XVIII դարի սկզբի հրովարտակների մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում Եվրոպացի կաթոլիկ միսիոներների՝ «ֆրանկների ու պատրիների», հայության շրջանում ակտիվ գործունեության դեմ ուղղված հրամանագրերը: Կաթոլիկական քարոզչությունը Արևելքում և մասնավորապես Իրանում ու Անդրկովկասում հին պատմություն ունի: Այն սկսվել էր դեռևս մոնղոլական Հուլավույան պետության ժամանակաշրջանից՝ XIII դարի երկրորդ կեսից: XVII դարի երկրորդ կեսից կաթոլիկական քարոզչությունը Իրանում և նրան հպատակ հայկական տարածքներում ակտիվացել էր կապված Արևմտյան Եվրոպայի երկրների հետ առևտրա-տնտեսական ու քաղաքական կապերի սերտացման հետ և մեծ վտանգ էր ներկայացնում պետականությունից զուրկ հայությանը՝ պառակտելով ազգը և ստեղծելով միմյանց դեմ թշնամաբար տրամադրված խմբավորումներ: Հանդիպելով մահմեդականների շրջանում իրենց քարոզչության նկատմամբ շահական կառավարության ու հոգևորականության անհանդուրժողականությանը՝ կաթոլիկ միսիոներները մեծ նշանակություն էին տալիս

հայության շրջանում տարվող իրենց աշխատանքին: Նրանք շահական արքունիքից ստանալով արտոնություններ, ինչպես նաև կաշառելով տեղի կառավարիչներին կարողանում էին ազատ քարոզչություն ծավալել, որի հետևանքով հետևորդների խմբեր ունեին Անդրկովկասի գրեթե բոլոր քաղաքներում ու Իրանի հայության շրջանում:

Կային մի շարք հանգամանքներ, որոնք հայերին խոցելի էին դարձնում կաթոլիկական քարոզչության առաջ: Նախ այն, որ հայ ժողովուրդը զուրկ էր պետականությունից, հետևաբար նաև պետության կողմից կրոնի հովանավորությունից: Հայ բնակչության համակրանքը շահելու համար միսիոներները բարեգործությամբ էին զբաղվում. անվճար բուժօգնություն ցուցաբերում, երեխաներին կրթում և այլն[24]: Եվրոպացի միսիոներները հայ ժողովրդի ու հոգևորականության առաջ այն պատրանքն էին ստեղծում, թե Հռոմի եկեղեցու դավանանքն ընդունելու դեպքում հայ ժողովրդի ազատագրումը եվրոպական երկրների օգնությամբ հնարավոր կլինի[25]: XVII դարի երկրորդ կեսում, երբ հայ եկեղեցու ղեկավարները Արևմտյան Եվրոպայի երկրներից օգնություն էին ակնկալում հայ ժողովրդին պարսկա-թուրքական տիրապետությունից ազատագրելու համար, կաթոլիկական քարոզչությունը թափանցել էր անգամ հայոց հոգևոր կենտրոն Էջմիածնի կաթողիկոսարան[26]: Միաժամանակ կաթոլիկական դավանանքն ընդունած հայկական համայնքները եվրոպական իշխանավորների միջնորդագրերի շնորհիվ որոշ արտոնություններ ունեին Իրանի տիրապետության տակ գտնվող տարածքներում[27]: Պետք է նշել, որ Իրանի շահական իշխանությունները հակասական քաղաքականություն էին վարում կաթոլիկ միսիոներների նկատմամբ: Չցանկանալով նրանց պատճառով վատթարացնել իրենց հարաբերությունները եվրոպական պետությունների հետ՝ նրանք մի կողմից պաշտպանում էին կաթոլիկ միսիոներների ազատ գործունեության իրավունքները, շնորհում արտոնություններ, մյուս կողմից սահմանափակում դրանք՝ հօգուտ Իրանին հպատակ հայության: Եվ այդ քաղաքականությունն իր դրսևորումն է գտել շահական հրովարտակներում: 1708թ. Ֆրանսիայի և Իրանի միջև կնքված պայմանագրի 27-րդ կետով ֆրանսիացի հոգևորականներին ու մյուս միսիոներներին իրավունք էր տրվում ազատ կերպով իրենց հավատի արարողություններն ու ծեսերը կատարել: Ոչ ոք չպետք է նրանց նեղեր, այն պայմանով, որ քրիստոնյաները իրենց տներից ու եկեղեցիներից դուրս շիա հավատին հակառակ արարքներ չգործեն: Պայմանագրի նույն կետով Կովկասի քաղաքներում, Սպահանում, Թավրիզում ու Իրանի մյուս վայրերում բնակվող կարմելիտ, եզուիտ, դոմինիկյան ու օգոստինյան քահանաներին միանշանակ կերպով տրվում էր գործունեության ազատություն[28]: Ֆրանսիայի դեսպան Միշելը միջամտում է միսիոներների և իրանահայ եկեղեցականների բախումներին:

1708թ. նա ձեռք է բերում շահական հրամանագրեր «միսիոներներին նեղացնողներին պատժելու համար» հասցեագրված մեկը Վրաստանի Վախթանգ թագավորին, մյուսը՝ Թավրիզի բեկլարբեկին: Այդ հրամանագրով հրահանգվում էր միսիոներներին չնեղել ու չարգելել հայերին կաթոլիկական եկեղեցին հաճախել[29]:

1712թ. ապրիլին հրապարակված նման մի հրամանագիրն է հիմք տվել Թավրիզի բեկլարբեկին տեղի հայերից 25 հոգուց, որոնք թույլ չէին տալիս մյուս հայերին հաճախել կաթոլիկ միսիոներների տներն ու եկեղեցին, որպես տուգանք 50-ական թուման գանձել[30]: Եվ որպես շահական երկդիմի քաղաքականության վառ ապացույց, կարելի է բերել Մատենադարանի կաթողիկոսական դիվանի 1գ 247 վավերագիրը, որը իրենից ներկայացնում է պարսից նույն շահ Մուլթան Հուսեյնի 1712թ. նոյեմբերի հրովարտակը, որով շահը խիստ սահմանափակելով հայության շրջանում կաթոլիկական քարոզչության շրջանակները՝ պահանջում է նաև ետ վերադարձնել վերը նշված տուգանքները:

XVIII դարի սկզբին, երբ հայ ազատագրական շարժումը իր կողմնորոշման մեջ շրջադարձ է կատարում դեպի Ռուսաստան, հայոց եկեղեցին փոխում է իր դիրքորոշումը կաթոլիկական քարոզչության հանդեպ և ջանք թափում միսիոներների ակտիվ գործունեությունը հայ բնակչության շրջանում սանձահարելու ուղղությամբ: Հայ եկեղեցու կողմից եվրոպացի միսիոներների դեմ լուրջ պայքար է մղում Ալեքսանդր Ա Ջուղայեցի կաթողիկոսը: Վերջինս դեռ մինչև Էջմիածնի կաթողիկոս դառնալը հանդես էր եկել որպես «բուռն պաշտպան հայադաւան ուղղափառութեան», որի մասին վկայում են նրա գրած «Գիրք ատենական, որ ասի վիճաբանական»-ը (Նոր Ջուղայում 1687թ. տպագրված) և «Աղօթամատոյց»-ը (1687թ. պատրաստած ու 1790թ. տպագրված)[31]: Նրա կողմից են ձեռք բերվում 1710թ. և 1712թ. շահ Մուլթան Հուսեյնի հրովարտակները, որ սահմանափակում են եվրոպացի միսիոներների գործունեությունը հայության շրջանում[32]: Հետագայում Աստվածատուր Կաթողիկոսի խնդրանքով նույն շահը վերահաստատում է իր 1717թ. հրովարտակը[33]:

Նշված ժամանակաշրջանի պարսկերեն հրովարտակներում, հատկապես նրանց խնդրագրերում, հաճախ բավական մանրամասն են արձանագրվում պատմական իրողությունները, որոնք օգնում են ճիշտ պատկերացնել պատմության զանազան հարցերի դրվածքն ու իրականությունը: Այս առումով հետաքրքրական նմուշներ են Մատենադարանի կաթողիկոսական դիվանի 2բ թղթապանակի 108 և 118 վավերագրերը, որոնցում հանգամանալից կերպով նկարագրվում են Տաթևի կալվածքների նկատմամբ մահմեդական պաշտոնյաների ու հայ իշխանավորների կողմից հասցված անօրինականությունները ու չարաշահումները, մահ-

մեղական ցեղերի ոտնձգությունները ու հայ գյուղացիության կողմից խռովարարական արարքները:

Թե որքանով են այս հրովարտակները պաշտպանել Սեֆյան Իրանին հպատակ հայության և հայ հոգևորականության իրավունքները ու հավատքի միասնությունը, դժվար է ասել: Հայտնի է սակայն, որ Իրանի Սեֆյան պետությունը XVIII դարի սկզբին լինելով բավական թույլ, ի վիճակի չէր վերահսկելու քաղաքական դրությունը իր երկրի ներսում և կանգնած էր փլուզման եզրին:

KOSTIKYAN KRISTINE

SAFAVID SULEYMAN, SULTAN HUSEYN SHAHS' EDICTS OF YEREVAN MATENADARAN

(Summary)

There are more than 100 edicts issued by Safavid shahs Suleyman, Sultan Husyn and Tahmasb II kept in Yerevan Matenadaran. Some of these edicts are original documents, others - savads, copies confirmed by divan-al-sadarat, the highest body of Muslim clergy and shari'ya-notarial offices or copies having no seal or signature, nevertheless of considerable historical importance. These edicts have reflected the worsening social-economic and political situation formed in Iran during the decline period of Safavid Empire, a period when the religious intolerance towards Armenian population, illegal deeds and abuses of state officials and wrongdoers were intensified. The major part of those edicts were obtained by Etchmiadsin catholicoses and other high clergymen to protect the religious rights and customs of Armenian population subject to Safavid Iran, to put an end to the encroachments of local officials on the land property of Etchmiadzin, Tatev and other Armenian cloisters and to restrict the missionary propaganda among the Armenians.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ս. Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 216-222:
2. Տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը (կազմեց Հ.Դ. Փափազյանը). հրովարտակներ, պրակ 1, Երևան 1956; պրակ II, Երևան 1959; կալվածագրեր, պրակ I, Երևան 1968:
3. Սավադի վերին մասում դրոշմված կնիքը իր մեջ պարունակում էր շահի անունը, իսկ նրա շուրջը գրված էր «բարձրագույն դիվանի պատճենի կնիքը», ինչպես օրինակ հետևյալ դեպքում (տե՛ս կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, 136. مسودهٔ دیوان اعلی بنده شاه ولایت صفی ثانی:مهر), իսկ փաստաթղթի ստորին մասում դրվում էին սադրի կամ մուֆթիի կնիքները:
4. Տե՛ս ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 156 և 163:
5. Այսպես, ՄՄ, կաթողիկոսական դիվանի թղթ. 1բ, 140 վավերագիրը թղթ. 1բ, 137-ի պատճենն է; 1բ, 139ա-ն՝ թղթ. 4, 112-ինը; թղթ. 2բ, 186-ը՝ թղթ. 2բ, 182-ինը:

6. Համեմատի՛ր ՄՄ, կաթողիկոսական դիվանի թղթ. 1գ, վավ. 252-ը և թղթ. 1գ, վավ. 885-ը, թղթ. 1բ, վավ. 173 և թղթ. 1գ, վավ. 884:
7. دکتر مریم میراحمدی،دین و دولت در عصر صفوی،تهران ۱۳۲۹،ص ۷۴
8. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ 146:
9. دکتر مریم میراحمدی،دین و دولت در عصر صفوی،تهران ۱۳۲۹،ص ۶۰
10. Տե՛ս Կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 144, 145 և այլն:
11. Տե՛ս Կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 129, 134, 136 և այլն:
12. Հ. Փափազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջ, «Բանբեր Մատենադարանի», 3, Երևան, 1956, էջ 95:
13. Կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, 129:
14. Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան 1938, էջ 65:
15. Նույն տեղում, էջ 83; ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, 134:
16. Մանր ժամանակագրություններ, հ. 1, Երևան 1951, էջ, 311:
17. Նույն տեղում, հ. 1, էջ 395:
18. Հ. Փափազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջ, էջ 92:
19. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 173, 156; թղթ. 2ա, վավ. 66, 68, 70ա; թղթ. 2բ վավ. 118 և այլն:
20. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 181; թղթ. 2բ, վավ. 108, 118; թղթ. 2բ, վավ. 114 և այլն:
21. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 182:
22. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1բ, վավ. 182, 206, 220; 2բ 130, 131:
23. ՄՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, 241, գործ 1, վավ. 127:
24. **В. А. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в XVII веке. Ереван, 1969, с. 126.**
25. Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2-րդ, Երևան, 1959, էջ 175:
26. Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1972, էջ 122:
27. Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 176-177:
28. عبدالحسین نوائی،روابط سیاسی ایران و اروپا در عصر صفوی،تهران،۱۳۷۲ ،ص.۲۷۳.
29. Հ. Աճեմյան, Պատմական Թավրիզի հին հայությունը, Դիվան Ատրպատականի հայոց պատմության, հատոր Ա, Պեյրութ, 1980, էջ 74:
30. Տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 247:
31. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Էջմիածին 2001, էջ 3184-3185:
32. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 268, թղթ. 1գ, վավ. 247:
33. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 272: